Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported** (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

Պրոլետարներ բոլոր երկրների, միացե՛ք.

5943

# ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ (ԲՈԼՇԵՎԻԿՆԵՐԻ) ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՂԲՋԻՋՆԵՐԻ

3КП(47.925
Հ-24

...ւթյուն Հ.Կ.Կ.(Բ).Կ.Կ.

2 5 AUG 2005
1 DEC 2009

*Պրոլետարներ բոլոր երկրների, միացեք.*

ЗКП(47-925)
Z-24
3458
1007/30957

# ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ (ԲՈԼՇԵՎԻԿՆԵՐԻ) ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՂԲՋԻՋՆԵՐԻ

*Հրատարակություն Հ.Կ.Կ.(Բ).Կ.Կ.*

Гос. Публ. библиотека
ССРА

3943
2 3 AUG 2005

ՏՐԵՍՏԻ ԱՌԱՋԻՆ ՏՊԱՐԱՆ

Գրառ. 461 գ. պատվեր 3183 տիր. 700

# ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ (ԲՈԼՇԵՎԻԿՆԵՐԻ) ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՂԲՋԻՋՆԵՐԻ

### *ԳՅՈՒՂԲՋԻՋՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՄԱՍԻՆ*

1. Գյուղբջիջ կազմակերպվում է այնտեղ, վորտեղ կան 3-ից վոչ պակաս կուսակցության իսկական անդամներ։

2. Գյուղբջիջն աշխատում է շրջանային կոմիտեյի ղեկավարության տակ, կատարում է շրջկոմի հանձնարարությունները ու իր աշխատանքներում հաշվետու յե շրջկոմին։ Այն վայրերում, վորտեղ շրջկոմներ չկան, գյուղբջիջներն անմիջապես կապվում են գավկոմի հետ։

3. Այն գյուղերում, վորտեղ կան 1 կամ 2 կուսանդամներ և մի քանի թեկնածուներ, կամ կան միայն թեկնածուներ ու հնարավոր չե այդ ընկերներին կցել մոտակա գյուղբջիջին, կամ մոտակա գյուղբջիջ չկա, այդ գյուղերում կազմակերպվում են թեկնածուական խմբակներ։ Շրջկոմը կամ գավկոմը պետք ե աշխատեն թեկնածուական խմբակները գյուղբջիջների վերածելու կուսանդամներ ուղարկելու և թեկնածուներին անդամ փոխադրելու միջոցով։

4. Թեկնածուական խմբակները կանոնադրական իրավունքներ (կուսաշարքերը ընդունելու համագումարներին պատգամավորներ ընտրելու և այլն) չունին։ Թեկնածուական խմբակներն ընտրում են քարտուղարներ։ Շրջկոմները, գավկոմները խիստ հսկողություն պետք ե ունենան թեկնածուական խմբակների աշխատանքներին։



5. Յեթե վորևե գյուղի կուսանդամների կամ թեկնածուների քանակը թույլ չե տալիս բջիջ կամ թեկնածուական խմբակ կազմակերպելու, այն ժամանակ այդ գյուղի կոմունիստները կցվում են մոտակա գյուղբջիջին։ Մոտակա բջիջի բացակայության դեպքում միայնակ կոմունիստներին հաշվառման ե վերցնում շրջկոմը կամ գավկոմը։ Միայնակ կոմունիստները մասնակցում են շրջանային բոլոր ընդհանուր ժողովներին։

## ԲՋԻՋԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎՆԵՐԸ։

6. Բջիջի ընդհանուր ժողովը հրավիրում ե բջիջի քարտուղարը, նախորոք համաձայնեցնելով բջիջի բյուրոյի հետ։ Ընդհանուր ժողով հրավիրվում ե նաև բջիջի անդամների $1/3$-ի պահանջով։

7. Ընդհանուր ժողովները օրինական են համարվում, յերբ բջիջի անդամների կեսից վոչ պակասը ներկա

յե լինում ժողովին։ Հերթական ընդհանուր ժողովները պետք է հավաքվեն կանոնավոր և ոչ պակաս 2 անգամից ամսական։

8. Բջիջի ընդհանուր ժողովների որակարգի հարցերը մշակում է քարտուղարը կամ բյուրոն ու նախորոք հայտարարվում է բջիջի բոլոր անդամներին։

Որակարգը հաստատում է ընդհանուր ժողովը։

9. Ընդհանուր ժողովը կատարում է բջիջի բյուրոյի կամ քարտուղարի ընտրությունը, քննում է ընդհանուր քաղաքական, կուսակցական ու տեղի կյանքին վերաբերող հարցեր, լսում է գյուղխորհրդում կոոպերացիայում, փոխոգնության ընկերությունների կոմիտեներում աշխատող կուսակցականների և անկուսակցականների (իրենց համաձայնությամբ) զեկուցումները։



10. Բջիջի ընդհանուր ժողովը գյուղկազմակերպությունների ընտրության ժամանակ առաջադրում է թեկնածուներ (և կուսակցական և անկուսակցական) անց է կացնում իր վորոշումները համապատասխան ֆրակցիաների միջոցով. ընտրում է պատգամավորներ շրջանային կուսհամագումարի համար, զբաղվում է կուսակցության մեջ ընդունելության խնդրով, քննում է նկատողություն անելու, կուսակցությունից հեռացնելու հարցեր (ընդունելությունը ուժի մեջ է մտնում գավկոմի և Կենտկոմի հաստատելուց, իսկ հեռացնելը գավկոմի և վերահսկիչ հանձնաժողովի հաստատելուց հետո)։

11. Բջիջի ընդհանուր ժողովը քննում է աշխատանքի ծրագիրը, կատարում է բջիջի անդամների միջև հիմնական պարտականությունների բաժանում, լսում է կատարված աշխա-

տանքների մասին զեկուցումներ, հետևում է, որ կուսանդամները կատարեն տրված հանձնարարությունները և հետևում է, որ կատարվեն ծրագրում նախատեսնված աշխատանքները։

12. Գյուղբջիջները գրավում են իրենց բաց ժողովներին Խորհրդային Իշխանության և կուսակցության մոտ կանգնած անկուսակցական գյուղացիներին և հրավիրում են կոմյերիտմիության անդամներին։ Բաց ժողովներին դրվում են գյուղացիական լայն մասսաներին հետաքրքրող հարցեր։ Բջիջի փակ նիստերի մասին նախորոք հայտարարվում է, փակ նիստերին ներկա յեն լինում կուսանդամները և թեկնածուները։

13. Բաց ժողովների մասին նախորոք պետք է հայտարարել գյուղացիությանը՝ փակցնելով հայտարարությունները կոոպերատիվում, խրճիթ-ընթերցարանում կամ այլ միջոցներով։ Բաց ժողովներում քվեարկության



մասնակցում են միմիայն կուսանդամները։

## ԲՋԻՋԻ ԲՅՈՒՐՈՆ ՅԵՎ ՔԱՐՏՈՒՂԱՐԸ

14. Գյուղբջիջները, վորոնց անդամների թիվը 7-ից պակաս է ընտրում են մի քարտուղար։ 7 և ավելի անդամներ ունեցող բջիջները ընտրում են բյուրո հետևյալ քանակով. 7—20 անդամը, 3 բյուրոյի անդամ և 2 թեկնածու, 20—50 անդամը 5 բյուրոյի անդամ և 2 թեկնածու, 50 և ավելի անդամ 7 բյուրոյի անդամ և 2 թեկնածու։ Բյուրոյի անդամներ և թեկնածուներ կարող են լինել միայն կուսակցության անդամները։ Բջիջի բյուրոն իր միջից ընտրում է մեկին բջիջի քարտուղար։ Բջիջի բյուրոյի անդամներին և քարտուղարին հաստատում է շրջկոմը կամ գավկոմը։

15. Ժողովից ժողով բջիջի աշխատանքները ղեկավարում է բյուրոն կամ քարտուղարը։ Բյուրոն կամ քար-

տուղարը իրականացնում են ժողովի վորոշումները, տալիս են հանձնարարություններ ընկերներին, հետեվում ու ստուգում են, վոր կատարվեն այդ հանձնարարությունները, ոգնում են հանձնարարություններ կատարողներին բջիջի անունից հանդես են գալիս գյուղի զանազան կազմակերպությունների ժողովներին և նախապատրաստում են բջիջի ժողովներում քննվելիք հարցերը։

16. Բյուրոն բաժանում է իր անդամների միջև բջիջի աշխատանքների հիմնական բնագավառները-աշխատանք կոմյերիտմիության, գեղջկուհիների մեջ, ագիտ պրոպ աշխատանք և այլն։ Բյուրոն կապ է պահպանում շրջկոմի կամ գավկոմի և տեղական կազմակերպությունների (խորհուրդ, կոոպերատիվ և այլն) հետ։

17. Բջիջի քարտուղարը նախապատրաստում է բյուրոյում և ընդհանուր ժողովներում քննվելիք հարցերը։



կատարում է անդամների հաշվեառում, ընդունում է անդամավճարները ու հանձնում է շրջկոմ կամ գավկոմ։

## ԸՆԴՀԱՆՈՒՐ ԽՆԴԻՐՆԵՐ ՅԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱՐԳԸ.—

18. Բջիջը առանձնացնում է մի պատրաստի ընկերոջ՝ քաղաքական և գյուղատնտեսական անգրագիտությունը վերացնելու աշխատանքները վարելու. այդ ընկերը հետեվում է, վոր բջիջի անդամները մասնակցեն ընդհանուր պատրաստականության և գյուղատնտեսական խմբակներում, գյուղում և շրջանում հրավիրվող կուրսերում և համագումարներում, աշխատում է, վոր վերադաս կուսկոմիտեները ուղարկեն դասախոսներ, զեկուցողներ, բջիջին հետաքրքրող հարցերի մասին զեկուցելու համար։

19. Բջիջը ամեն կերպ պետք է աջակցի գյուղխորհրդի գյուղկազմակերպությունների աշխատանքների աշ-

խուժացման և լավացման, ձեռք առնի բոլոր միջոցները այդ աշխատանքներին մասնակից դարձնելու լայն աշխատավորական մասսաներին։

20. Գյուղբջիջը կազմակերպում է Գյուղխորհրդի կամ գյուղական այլ կազմակերպության կից ֆրակցիա, յեթե այնտեղ կան 3-ից վոչ պակաս կուսանդամներ։ 3-ից պակաս յեղած դեպքում ֆրակցիան ձեվավորվում է բջիջի անդամի կցման միջոցով։ Բջիջը գյուղական հասարակական կազմակերպությունների աշխատանքները ղեկավարում է ֆրակցիայի միջոցով։

21. Գյուղբջիջը վերացնում է գյուղկազմակերպություններում նկատված թերությունները ֆրակցիայի միջոցով, յեթե ֆրակցիան չկարողացավ վերացնել թերությունները, բջիջը դիմում է վերադաս կուսկազմակերպություններին ու այդ ճանապարհով վերացնում թերությունները։



22. Գյուղբջիջը չպետք է կանխորոշի գյուղկազմակերպությունների աշխատանքների բոլոր հարցերը, այլ պետք է աշխատի, վոր գյուղկազմակերպություններն ինքնուրույն կերպով լուծեն իրենց աշխատանքին վերաբերվող գործնական խնդիրները։

23. Գյուղբջիջը պետք է աջակցի, վորպեսզի լայն կերպով լուսաբանվեն ընտրող գյուղացիների համար գյուղխորհրդի աշխատանքները։ Գյուղական ընդհանուր ժողովներում պետք է քննության դրվեն գյուղխորհրդի զեկուցումը և գյուղի կյանքին վերաբերվող կարեվոր խնդիրները։

24. Գյուղբջիջը լուրջ պատրաստվում է կուսհամագումարներին, շրջանային, գավառային և ընդհանուր ներկայացուցչական ժողովներին, նախորոք քննելով նրանց որակարգի բոլոր հարցերը։

25. Գյուղբջիջը իր շուրջը պետք է

համախմբի գյուղի չքավոր ու բատրակ տարրերին ու սրանց միջոցով ամրացնի կապը գյուղի միջակ տարրերի հետ։ Բջիջը այդ տարրերի մեջ աշխատանքներ պետք է կազմակերպի, մասնակից դարձնի գյուղկազմակերպությունների աշխատանքներին, անհատական կապ ստեղծի իր անդամների և նրանց միջև, կռվի կուլակների ազդեցությունից ազատագրելու չքավոր ու միջակ գյուղացիներին ու աջակցի բատրակներին պրոֆմիության մեջ մտցնել։

26. Գյուղբջիջը ընկերական ճիշտ հարաբերությունների, ճիշտ մոտեցման միջոցով և իր ճիշտ աշխատանքով համախմբում է իր շուրջը գյուղանկուսակցական ակտիվը։ Այդ ակտիվի հեղափոխական, Խորհրդային իշխանության նվիրված և լավագույն տարրերին ընդունում է կուսակցության մեջ։

27. Գյուղբջիջը մանրազննին



պետք է մոտենա ամեն մի կուսակցության մեջ ընդունվելու համար դիմում տվողին. պետք է ընդունի կուսակցության համար արժեքավոր, հասարակական աշխատանքներին մասնակցող և կայուն ընկերներին։ Անհրաժեշտ է հնարավորին շուտ քննել այդ դիմումները։

28. Գյուղբջիջը հետևում, է որ թեկնածուները ժամանակին փոխադրվեն կուսանդամ՝ միաժամանակ կատարելով կանոնադրության բոլոր պահանջները։

29. Գյուղբջիջը ամեն կերպ աջակցում է գյուղացիների կոոպերացման աշխատանքներին, տնտեսության վարելու լավագույն ձևերի կիրառման, տնտեսության կոլլեկտիվացման, սկսած համագործակցության ամենապարզ ձևերից (արտել ընկերություն)։ Այս աշխատանքներում բջիջի անդամները անձնական օրինակ պետք

է ցույց տան։ Բջիջը իր ժողովներում քննում է հողաշինարարության, գյուղատնտեսության բարձրացման և լավացման հիմնական հարցերը, բացատրում է գյուղացիներին լավագույն ձևերի առավելությունները, կազմակերպում է զեկուցումներ, զրույցներ, դասախոսություններ գյուղատնտեսական խմբակներում, գյուղատնտեսական հարցերի շուրջը, տեղյակ է պահում գյուղացիներին գիտության նոր նվաճումների ու մոտիկ գտնված լավագույն տնտեսությունների հաջողությունների մասին։

30. Գյուղբջիջը հատուկ ուշադրություն է դարձնում մասնակից դարձնելու հասարակական և կուլտուրական աշխատանքներին գյուղի ինտելիգենցիայի առաջավոր տարրերին (ուսուցիչ, բժիշկ, գյուղատնտես և այլն), կապ և ճիշտ ընկերական հարաբերություն է ստեղծում նրանց հետ։



31. Գյուղբջիջը հետևում է, որ բջիջի անդամները անհատորեն կամ կոլեկտիվ բաժանորդագրվեն որևէ լրագրի։ Բջիջը իր միջից առանձնացնում է թղթակից մամուլում կուսակցական կյանքը լուսաբանելու համար կանոնավոր կերպով։ Գյուղբջիջը աջակցում է գյուղթղթակիցներին գյուղի կյանքը տեղական մամուլում լուսաբանելու համար։ Բջիջը հետևում է, որ իր թղթակիցները ժամանակին ու կանոնավոր ուղարկեն նյութերը։

32 Գյուղբջիջը կազմակերպում է գեղջկուհիների մեջ աշխատանքներ, ղեկավարում է պատգամավորուհիների ժողովները, հատուկ ուշադրություն է դարձնում մասնակից դարձնելու գյուղկազմակերպությունների աշխատանքներին գեղջկուհիներին։ Գեղջկուհիներից ամենաակտիվներին, հեղափոխական, կուսակցության նվիրված ու գիտակից տարրերին ընդունում է

Гос. Публ. Библиотека ССРА им. А. Мясникяна

կուսշարքերը։ Բջիջը իր անդամներից մեկին առանձնացնում է վորպես գեղջկուհիների ղեկավար կազմակերպիչ։ Առանձնացված ընկերը կապ է հաստատում շրջկոմի կամ գավկոմի բանգեղջբաժնի հետ ու պարբերաբար զեկուցում է բջիջի ժողովներին։

33. Գյուղբջիջը ղեկավարում է կոմյերիտմիության աշխատանքները առանձնացած ընկերոջ (ցանկալի յե բջիջի քարտուղարին) միջոցով, նա մշտական կապ է պահպանում ԼԿՅԵՄ բ՚իջի հետ։ Բջիջի կոմյերիտմիության լավ անդամներին քաշում է կուսակցության շարքերը, աջակցում է, վոր ընդունակ կոմյերիտականները առաջ քաշվեն զանազան կազմակերպությունների գործնական աշխատանքներում։ Բջիջը ամեն կերպ աջակցում է պիոներական շարժմանը։

34. Գյուղբջիջը հատուկ ուշադրություն է դարձնում անմիջական աշխատանքի քաշելու զորացրված կարմիր բանակայիններին, վորոնք ճիշտ ոգտագործման դեպքում գյուղի առաջավոր տարրերը կարող են լինել։



35. Բջիջը իր բոլոր աշխատանքների ընթացքում առանձնահատուկ ուշադրություն է դարձնում ընկերական պարզ հարաբերություններ ստեղծելու վրա, կռվում է թե կուսանդամների և թե գյուղի զանազան կազմակերպությունները ղեկավարող անկուսակցականների ունեցած հրամայողական ադմինիստրատիվ թեքման և գյուղացիների կարծիքները արհամարհելու դեմ։

---

ՊԵՏ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Публ. библиотека
ՀՍՍՀ ССРА
им. А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

ՀՀ Ազգային գրադարան
NL0184365